ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտ 2024 թվականի թիվ 48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 2024 թվականի մարտի 15-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը՝

1) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 17-ի N 11 որոշման մեջ լրացում կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին.

3) Համայնքապետարանի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները հրատապ բաց մրցույթի ընթացակարգով անցկացնելու համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտ 2024 թվականի թիվ 49

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 11 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող անշարժ գույքը նվիրատվություն ընդունելու մասին » N 11 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
1) որոշման՝ 1-ին կետում գրված « վարչական շենք» բառերից հետո լրացնել « թատրոնի շենք, ավտոկայանատեղի և քաղաքային զբոսայգի » բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտ 2024 թվականի թիվ 50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2024 թվականի մարտի 15-ի N 50 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի անվանումը	Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոնի կապիտալ վերանորոգման,գույքի ձեռքբերման,բակի տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ
Մարզ	Կոտայք
Համայնքը /բնակավայրը	Համայնք՝ Ծաղկաձոր, բնակավայր՝ Մեղրաձոր
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից	Մայրաքաղաքից՝ Ծաղկաձոր համայնք 57կմ, Մեղրաձոր բնակավայր՝ 66կմ,
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Համայնքի՝ 7701 մարդ, Մեղրաձոր բնակավայրի բնակչության թիվը՝ 2750 մարդ
Սահմանամերձ համայնք/բնակավայր	-
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրը հանդիսանում է ռոյալթի վճարած կազմակերպությունների, մասնավորապես «Մեղրաձոր գոլդ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության ազդակիր բնակավայր: Մեղրաձոր բնակավայրում է գտնվում Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոնը, որը կառուցվել է դեռ 1977 թվականին,կենտրոնը երկհարկանի է ,առաջին հարկում առկա է դահլիճ որը նախատեսված է 750 մարդու համար, 5 դասասենյակ ,սանհանգույց,հոսանքի կարգավորման խցիկ,իսկ երկրորդ հարկում՝գրադարան 6851 կտոր գրականությունից,ընթերցասրահ և պահոց, 2 խմբասենյակ,վարչական հատված: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել կապիտալ վերանորգման աշխատանքներ քանի որ դասասենյակները , դահլիճը, գրադարանը, սանհանգույցները գտնվում են ոչ բարվոք վիճակում , շենքի տանիքը անհրաժեշտ է ամբողջությամբ փոխարինել նորով ,քանի որ գտնվում է ոչ բարվոք վիճակում , տեղումների ժամանակ կան կաթոցներ ,որոնց հետևանքով քայքայվել են առաստաղները և պատերը: Կենտրոնի պատուհանների 70%-ը փայտից են իսկ մնացաց 30 %-ը եվրոպատուհան, բայց անորակ ոչ էնեգախնայող,անհրաժեշտ է փոխարինել պատոհանները, դռները նոր էներգարդյունավետ պատուհաններով և դռներով: Ներկա պահին շենքը ջեռուցում են էլեկտրականությամբ, բայց տեղադրված արևային ֆոտովոլտային կայանը չի բավարարում ծախսին , տանիքի վերանորոգումից հետո հնարավոր կլինի ավելացնել կայանի թվաքանակը և ավելացված վահանակների արդյունքում ջեռուցումը կկազմակերպվի էլեկտրականության միջոցով:Մարզամշակութային կենտրոնը գործում է ամբողջ տարվա ընթացքում երեխաների

հաճախելիությունը բարձր է սաների թիվը հասնում է մոտ 200-ի որոնց թվում են նաև հարակից բնակավայրերի երեխաներ,սակայն, ձմռան ամիսներին հաճախելիությունը նվազում է կախված ցուրտ պայմանների հետ:

Կենտրոնի դահլիճը նախատեսված է 750 հյուրի համար ,որի վերանորոգման , գույքի ձեռք բերման արդյունքում , հնարավոր կլինի կազմակերպել համերգներ ,թատերական ներկայացումներ,կինոդիտում և այլ միջոցառումներ:

Ներկա պահին մարզամշակութային կենտրոնում գործում է 6 խմբակ (ժողովրդական պար,դուդուկ,դհոլ,ասեղնագործություն,նկարչություն և ձյուդո)

Մարզամշակութային կենտրոնի որդեգրած քաղաքականությունն է ՝ ազգային մշակույթի վերականգնումը,հանրահռչակումն ու պահպանումը,ժողովրդական մոռացված արհեստների վերականգնումը:

Այս գործելավոճի շրջանում տարեկան իրականացվում է 30-40 միջոցառում:

Մարզամշակութային կենտրոնի գույքը գտնվում է բավարար վիճակում,սակայն, գույքը հին է և կենտրոնը ունի գույքի կարիք , վերանորոգումից հետո կստեղծվեն նոր դասասենյակներ և նոր խմբակներ կստեղծվեն նոր աշխատատեղեր,որոնց համար նույնպես անհրաժեշտ լինելու նոր գույք:

Մարզամշակութային կենտրոնի բակը ունի բարեկարգման ,ցանկապատման և կանաչապատման անհրաժեշտություն, քանի որ բնակավայրը գյուղական է և տեղի բնակչությունը զբաղվում է նաև անասնապահությամբ, ցանկապատի բացակայության պատճառով կենդանիները ազատ մուտք ունեն բակի տարածք, այդ իսկ պատճառով բակի ցանկապատումը առաջնային խնդիրներից է:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը դեռևս առկա չեն,բայց նախնական ուսումնասիրությունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է ≈ 85,165,100 ՀՀ դրամ

Ծրագիրը ներառված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում :

Ծրագրով նախատեսված ուղության համապատասխանելիությունը ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 2)-րդ կրթություն և գիտություն , 1-ին կետի 5)-րդ մշակույթ,սպորտ և երիտասարդության զբաղվածություն ,ենթակետերին

Ծրագրի ակնկալվող արդյունքները	*- Հիմնական շահառուների քանակը-7701*
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	*Ծրագրի շահառու են հանդիսանում համայնքի բնակիչները , զբոսաշրջիկները, աշխատակազմը:*

	Ծրագրի իրականացման արդյունքում կտրուկ կավելանա սաների թիվը,կավելանա հրավիրված միջոցառումների քանակը , կստեղծվեն նոր խմբակներ (երգի,դաշնամուրի,խեցեգործության,գորգագործության և կարպետագործության,շախմատի) կստեղծվեն նոր աշխատատեղեր,դահլիճի վերանորոգման արդյունքում համերգային թատերական միջոցառումների և կինոդիտման շնորհիվ հնարավոր կլինի նաև ապահովել համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների ժամանցը:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	*Նախատեսվում է՝* *1. կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերը* *2. անցկացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն* *3. գրամադրել ՃՀԱ,* *4. կազմակերպել գնման ընթացակարգ* *5. ընտրել այն պատասխանատու կազմակերպությանը, որն ունի ծրագրով նախատեսված գործունեության համար պահանջվող արտոնագիր և կիրականացնի տվյալ աշխատանքները նշված որակով ու ժամկետներում:* *6. Տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող ընկերության հետ պայմանագրի կնքում:* *7. Հեղինակային հսկողության ծառայությունների համար պայմանագրի կնքում:* *8. Շինարարության թույլտվության գրամադրում:* *9. Շինարարության ընթացքում շինարարական ծառայությունների մատուցման աշխատանքների որակի և ծավալի հետևում:* *10. Ծրագրի վերջնական արդյունքի ընդունում և վճարում:*
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբը՝ ըստ պայմանագրի* *Տևողությունը՝ 6 ամիս* *Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը:*
Ծրագրի հնարավոր ռիսկերը	*Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:*

Համայնքի ղեկավար ***Նարեկ Հարությունյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտ 2024 թվականի թիվ 51

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և <<Գնումների մասին >> օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները անցկացնել հրատապ բաց մրցույթի ընթացակարգով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2024 թ. Մարտի 15-ի N 51 որոշման

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

1. Ծաղկաձոր համայնքի՝ Աղավնաձոր բնակավայրի 4-րդ փողոցի և 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ՝
2. Ծաղկաձոր համայնքի՝ Ծաղկաձոր քաղաքի Պահլավունյաց փողոցի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման և մայթերի կառուցման աշխատանքներ
3. Ծաղկաձոր համայնքի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ
4. Ծաղկաձոր համայնքի Խ.Կեչառեցի փողոցում կոյուղու և ջրահեռացման համակարգի կառուցման և Սարալանջի փողոցում կոյուղու կառուցման աշխատանքներ
5. Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ
6. Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ
7. Ծաղկաձոր համայնքի Փյունիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ
8. Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքում սգո սրահի կառուցման աշխատանքներ:

Համայնքի ղեկավար ***Նարեկ Հարությունյան***